



Ա. ԱԼՊՈՅԱՆՅԱՆ

ՀԱՅՍ.ԴԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ*)

Բ

ՀԱՅԱՍՏԱՆԵՆ ԴՈՒՐՍ



որդարև բազմաթիվ փաստեր կան ցույց տուող, որ մինչև ժ դար Հայաստանյայց Եկեղեցին սքանչելի առաքելութուն մը կատարած է ոչ միայն երկրին ներսը, Հայաստանի բնակիչները իսկական «հայ քրիստոնյաներ» դարձնելով և կրոնական միութուն մը ստեղծելով, այլ և Հայաստանի սահմաններեն դուրս նվաճումներ ըրած և հայադավանութեան ծոցին մեջ առած էր Հայաստանի աշխարհագրական սահմաններեն դուրս, վերը հիշված վայրերեն զատ, դրացի կարգ մը աշխարհամասեր, որոնք հայկական ծագումով ստվարաթիվ բնակչութուն ունեին:

Այսպես Հայ Եկեղեցին իր քարոզչական գործունեութեամբ աշխատած է տարածելու քրիստոնեութունը Հայաստանի սահմաններեն դուրս, բոլորովին այլացեղ ժողովուրդներու մեջ, ինչպես Կովկասյան լեռներու երկու կողմերը բնակող հեթանոս ժողովուրդները, որոնց քրիստոնյա դարձնել աշխատած է:

Արդեն հիշվեցավ, թե ինչպես վրացիք ու աղուանք քրիստոնեութունը ընդունեցին լուսավորչեն**):

Իր թող՝ Մանուկ Գրիգորիս, հատկապես կովկասյան ժողովուրդներու, մինչև ռՍԱՀ-

*) Սկիզբը տես «Էջմիւնսիւն», մարտ-ապրիլ 1947 թ.:

***) Հմմտ. Մ. Խորենացի Բ. ԻԲ, Ստեփանոս Օրբելյան Ա. հտ., էջ 59, Ազաթանգեղոս էջ 627—628, Մովսէս Կաղանկատուացի էջ 123, Դիրք թղթոց էջ 128, 130, 132, 174 ևն., Ն. Մառ.—Մկրտութիւն Հայոց, Վրաց, Աբխազաց և Ալանաց ի Սրբոյն Գրիգորէ (Թարգմ. Յուսիկ Արք., Վաղարշապատ 1911):

ՄԱՆԱՑՆ ՄԱՂԹԹԱՑ» քարոզիչը եղած և նահատակված է հոն 335-ին իր հավատածավայ գործունեության պատճառով (Հմմտ. Հայկառան, էջ 203—204):

Է դարուն վերջերը, 688-ին Աղտանից Վարազ Տրդատ իշխանը հոնաց թագավորին հետ դաշինք կնքելու համար իբր պատվիրակ կղզկե Իսրայել անուն եպիսկոպոս մը, որն որքան իր քաղաքական առաքելութեամբ, նույնքան ալ կրոնական քարոզչութեամբ զբաղած է, հոնաց մեջ քարոզելով Քրիստոսի կրոնը և մկրտելով շատերը, ինչպես նաև հաստատելով եկեղեցիներ (Կաղանկատուացի, էջ 368—401):

Այս անցողակի հիշատակութիւնները, բնական է, անբավական են ճշտելու համար Հայ Եկեղեցիին հաջողութեանը շափը, որ ան ունեցած է կովկասյան լեռնականներու մեջ. սակայն որոշ է, որ բոլորովին աղարդյուն չէ եղած Հայ եկեղեցիին ճիգը և մինչև իսլամութեան ծագումը ու արաբներու կողմէ Հայաստանը նվաճելը, այդ խառնիճադանճ զանգվածներու մեջ քրիստոնեութունը ապրած է շնորհիվ հայ անձնվեր եկեղեցականներու քարոզչութեան:

Բայց եթե հայերը չեն հաջողած ամբողջ կովկասը հայադավան դարձնել, գեթ որոշ է թե վրացիները և աղուանները կրցած են ենթարկել Հայ Եկեղեցիին հովանիին: Անոնց եպիսկոպոսները հայ կաթողիկոսներեն կձեռնադրվեին, նույնիսկ վրացի պամիշներու վկայութեամբ*) (Հմմտ. Հայկառան, էջ 204—205):

*) Ջուանչեռ.— Պատմութիւն Վրաց, էջ 70: Brosset.—Histoire de la Georgie, St. Petersburg 1849, Ա. հտ., էջ 136: Ն. վրդ. Ակինեան.— Կիւրն, էջ 15 և 85:

Մաշտոց, վրաց և աղուանից գիրերը պատրաստելով, ամրապնդեց քրիստոնեությունն այս երկիրներուն մեջ, ինչպես կհաստատե վրական ավանդությունն ալ (Շ. Ա. 1934, էջ 124):

Մովսես Կաղանկատուացի, աղուանից պատմիչը, (Ա. էջ 190) կըսե, թե Մաշտոց ձգե՛ր գհարոգութիւն անտարաւեին յաշխարհէն Ուտիացոց և յԱղուան և ի Փլինս և ի Կասպս և ի Կուռն Զողայ և զայլագրի ազգսն, զորս զեռուրեամբ էր ամենալ Աղեհասանրի Մակեդոնացոյ, և նստուցեալ զմեծ լեռամբն Կալկասո՝ զգարգարոն և Կամիեիկ Հեփրաղսն յարձուցեալ ի հաւաստ՝ զկարգ աստուածպաշտութեան ուսուցանէր, զոր ի վաղեջոց ունեալ՝ էին մտացեալ: Բոլորովին քարոզ և առաքեալ խածալուծ Սարոստենեացն լինելով ըստ նոցին բարբառոյ զպրուրեան անե՛ր զնոս ծանօթս):

Ս. Մաշտոցի քարոզությունները, Աղուանից պատմիչին համեմատ, ապարդյուն չանցան: Իր աշակերտները հետզհետե բազմացան և քրիստոնեությունը տարածեցին ավելի հեռուն, ինչպես հոնաց մեջ: Մասնավորապես նշանակելի է, որ աղուանները, որոնք անկախ թագավորություն մըն ալ ունեին, հին եկեղեցական ավանդություն համաձայն ինքնազուլս եկեղեցի մը կազմած էին, իրենց հատուկ կաթողիկոսով, բայց կմնային հայադավանության կապված: Անոնք ժամանակի ընթացքին բոլորովին հայացան, շնորհիվ կրոնքին. և սուվերի վերածված ու իր գոյությունն իմաստը կորուած իրենց կաթողիկոսությունը ջրնջվեցալ 1836-ին և բոլորովին ենթարկվեցան հայոց կաթողիկոսության այն երկիրները, որոնք, իբր երբեմնի Աղուանից աշխարհին մասեր, կմնային Գանձասարի մեջ նստող «Աղուանից» տիտղոսով կաթողիկոսին իշխանության տակ: *) Ընդհակառակը վրացիք, որոնք մինչև է դար հայոց կաթողիկոսներու զխնամությունը կճանչնային և հայոց հետ հավատակից էին, է դարուն հարեցան քաղքետոնականության և Հայ

եկեղեցիին բաժնվեցան բոլորովին: Սակայն նկատելի է, որ Վրաստանի մեջ կապրեին միշտ մեծ թիվով հայեր, և կարելի է նաև հայադավան վրացիներ, որոնք պահած են իրենց հնավանդ ծեսերը և դավանանքը:

Ասոնք նշանակելի թիվ մը ունեին, սակայն բնական է, չէին կրնար եկեղեցական կազմակերպություն ունենալ, կրոնական աննեբողջության պատճառով, որչափ ատեն որ քաղքետոնականության վեճը կարծարծվեր և Բյուզանդիոն կհոյանավորեր Վրաստանը:

Սակայն երբ կիրքերը հանդարտեցան և Բյուզանդիոն հեռու մնաց Վրաստանեն և հայք ու վրացիք իրարու մոտեցան հասարակաց բարբարոս թշնամիներու դեմ, որոնք արևելքեն Հայաստան ու Վրաստան կարշավեին, հայերը կրցան Վրաստանի մեջ վայելել դավանանքի ազատություն և ունենալ իրենց կրոնական վարչությունը, նույնիսկ երկիրին մայրաքաղաքին՝ Թիֆլիսի մեջ, ուր ժի դարուն առաջին անգամ կհիշվի հայ եպիսկոպոսի մը գոյությունը, թեև անհավանական չէ, որ ավելի կանուխեն ալ գոյություն ունեցած ըլլա:

Դեպի հյուսիս, Հայաստանի սահմաններն դուրս, հայերը տարածված էին Պոնտոսի ուղղությամբ ևս: Մասնավորապես Խախտիք ամբողջովին և Պոնտոս մասամբ լեցված էին հայերով, որոնք, բյուզանդացիներու այդ շրջաններն քաշվելեն և հեռանալեն հետո, հայադավանության ծիրին մեջ մտան, մասնավորապես Խախտիքի շրջանը, որուն կեդրոնն էր Բաբերդ (այժմ Պայպուրդ):

Իսկ Տրապիզոն, կեդրոնը Պոնտոսի, միշտ մնաց միայն մասամբ հայացած քաղաք մը:

Դեպի արևմուտք, Հայաստանի սահմանակից Փոքր Հայքը, որ Եփրատեն Ալիս տարածվող երկիրները, ինչպես և Եփրատեն մինչև Տավրոս լեռները տարածվող հողերը կզբավիր, ամբողջովին հայ չէր իր բնակչությամբ, բայց ուներ սուվար թիվով հայ ծագումով բնակիչներ, որոնք զժբախտաբար բյուզանդական տիրապետության տակ չէին կրնար ազատորեն իրենց կրոնքը պաշտել:

Արաբական տիրապետությունը երբ մինչև այդ տեղերը տարածվեցալ, այդ շրջաններու բնակիչները կրցան փրկվիլ բյուզանդական կրոնական հալածանքներեն և կերպով մը կրոնական ազատություն ձեռք բերել:

Հավանորեն այդ շրջանին է, որ հայադավանությունը մեծապես կնպաստավորվի ու կամրանա և եպիսկոպոսություններ կը-

*) Հոս ավելորդ ըլլա դիտել տալ, թե Աղուանի Խախտիք շատ պզտիկ հողամաս մը ունեին իրենց տիրապետության տակ, Կոր դեպին հյուսիսային կողմը Արշակունյաց ժամանակ իրենց իշխանության ենթարկեցին նաև դեպի հյուսիս գտնվող Կովկասյան կարգ մը ցեղեր և հասան մինչև Տերպետ կամ Ճորս պահակ: Իսկ Ե դարեն հետո Աղուանից թագավորության կցվեցան Հայաստանի մաս նկատված Ուտի և Արցախ նահանգները և Գուգարքն ու Սյունիքն փոքր մասեր: Ուտի և Արցախ զուտ հայաբնակ չին և հետո հայացան:

հաստատվին Սեբաստիոն, Մալաթիոն, Եվդոն-
կիոն, Նիկոպոլսո պես, եթե ոչ բոլորովին
հայաբնակ, գեթ խիստ հայաշատ քաղաքնե-
րու մեջ: Այս պատճառով, երբ Վասիլ
կայսրը (976-1025) հաջողեցավ Փոքր Հայքը
վերստին գրավել և առաջանալ մինչև բուն
Հայաստան, բյուզանդացիք սաստիկ հալա-
ծանք գործադրեցին հայոց դեմ:

Ասոր կարկառուն փաստն է այն մեծ
հալածանքը, որ Սեբաստիոն և Մելիդիների,
այսինքն Ա. և Բ Հայքի, հույն մետրոպոլիտ-
ները ըրին հայոց դեմ: Սեբաստիոն մետրո-
պոլիտը 986-ին մինչև իսկ մարմնական
տանջանքներ ի գործ դնել տվավ և նահա-
տակեց զոր օրինակ Սեբաստիո Գաբրիել
ավագերեցը: Անիկա արգիլեց նաև հայոց
եկեղեցիին կոչնակը:

Որքան որ հայադավաններն շատերն ա-
րիաբար դիմադրեցին այս հալածանքներուն,
սակայն տկարացողներ ալ հղան, ինչպես
Սեբաստիո՝ Սիոն և Լարիսայի՝ Հովհաննես
եպիսկոպոսները և կարգ մը քահանաներ
(Ասողիկ, 1859, էջ 188—189):

Անիկա ապացույց մըն է, որ հայադավա-
նությունը, հակառակ աններող և մոլեռանդ
հույն կղերին և զայն հովանավորող բյու-
զանդական կայսերական իշխանության հա-
լածանքներուն, ուժ մըն էր և տոկո՞ւ՝ դիմա-
կալելու համար ամեն տեսակ փորձություն-
ներու, որոնք ժԱ դարուն մեծ համեմա-
տություններ առին, ինչպես կղիտե Ծառ
Տիհլ (Բյուզանդական կայսրության կառա-
վարությունը և վարչությունը Դ. հտ. գլ. ԻԳ.
էջ 737):

1007-ին Մառազատիկի առթիվ հարուց-
ված մեծ հալածանքը, որուն միայն Երու-
սաղեմի մեջ 10.000 քրիստոնյաներ զոհ գա-
ցին (Մամուել Անեցի, էջ 104 և Մատթեոս
Ուռնայեցի, էջ 53), ցույց կուտա թե հակա-
քաղքետոնականությունը, որուն զլխավոր
ներկայացուցիչներն էին հայերը և ասորի-
ները, որքան մեծ ույժ կներկայացներ բյու-
զանդական կայսրության մեջ: Մասնավորա-
պես հակաքաղքետոնականներու դեմ գոր-
ծադրված հալածանքներուն զլխավոր թա-
տերավայր ժ—ժԱ դարերուն Սեբաստիան ու
Լարիսան ըլլալը փաստ է, թե որքան մեծ
ույժ կներկայացնեին հայերը Փոքր Հայքի
և Կապադովկիոն մեջ և որքան ամուր փարած
էին իրենց կրոնքին և ինչպես կմաքառեին
անոր պահպանության համար:

Ուրեմն Արշակունյաց անկումեն հետո հայ
խիտ բնակչությամբ մը լեցված Փոքր Հայք և
Կապադովկիա, Պոնտոս ու Միջագետք
նույնպես հայադավանության կապված էին

և հայադավանության սահմանները կտա-
րածվեին Հայաստանի աշխարհագրական
սահմաններեն շատ հեռու:

Հավանական է ենթադրել թե ժ դարուն,
Սեբաստիոն և Լարիսայի հետ միաժամանակ,
Լիկանոնի կամ Խարբերդի ու Մալաթիոն
մեջ*), որոնք կգտնվեին դեպի ավելի արե-
վելք՝ Մայր Հայրենիքին մոտ, կային եկե-
ղեցական—վիճակային վարչություններ կամ
եպիսկոպոսներ, միայն թե դժբախտաբար
հաստատող հիշատակություններ կպահպին:

Լիկանոնի շրջանակին մեջ սակայն հայ
վանքի մը շինությունը Անանիա Մոկացի
կաթողիկոսի (946-968) ատեն, ինչպես կը-
հաստատե Ասողիկ (էջ 161), և Մալաթիոն
երկար ատեն իսլամ տիրապետության են-
թարկված ըլլալը, ենթադրել կուտան, թե
պետք է հոն տեղերն ալ ժ դարուն վիճակա-
յին կազմակերպություններ գոյություն ունե-
ցած ըլլաին: Իսկ եթե մինչև այն ատեն
չէին ունեցած, այդ դարուն ունենալին,
վասնզի նույնիսկ Վասիլի օրով գործադր-
ված հալածանքներն հետո, երբ բյուզանդա-
կան պետությունը ներքին ըմբոստություն-
ներով կբաշխվեր, մասնավորապես Վարդ
Սքերոսի հայկական բնույթ ունեցող ապու-
տամբությունով, Խաչիկ Ա. Արշարունի
(976-992) կաթողիկոս կձեռնադրե ձեպխ-
կոպոսունս յԱնախոբ Ասուրց և յ Տաբուն
Կիրիկեցուց և ի Սպյունտայ**) և յամենայն
գառառն յայնուօրի, (Ասողիկ, էջ 249):

Անիկա ցույց կուտա, որ ժ դարուն Փոքր
Հայքեն ավելի անդին, Եփրատացվոց կողմն
Տավրոսի հարավկողմը, արդեն կարևոր
թիվով հայեր տեղավորված էին, որոնց հո-
գևոր վարչության գործը մտածության առար-
կան կըլլա հայոց կաթողիկոսին, որ այդ
կողմերուն համար կնշանակե հայ եպիսկո-
պոսներ:

*) Մալաթիա (հիներու Մելիդիեն), Հայաստա-
նի արևմտյան սահմանագլուխին վրա, Հայաստանի
մաս կհամարվեր տեսականին մեջ և Դ Հայոց նահան-
գին գլխավոր քաղաքներն մին էր: Սակայն շատ
կանուխ Հայաստանեն բաժնված, բյուզանդական
տիրապետության ենթարկված էր և ավելի մաս կհա-
մարվեր բյուզանդական Փոքր Հայքին և կարևոր դեր
մը կատարած էր իր ռազմական դիրքով Եփրատի
վրա, իբր կամրջագլուխ մը, որով բյուզանդացիք
երկար տարիներ դիմագրաված են արարական արշա-
վանքներուն:

**) Սուրտան Օրմանյան ցեղանյացն Սելիմունիայի
(Սելիմունտիայի) հետ (այժմ Սելիմդի), որ Լր էրբեմն
Տրայանուպոլիս և գլխավոր քաղաք Իսավրիո ու նա-
վահանգիստ:

Այդպես, տակալին, ժ դարուն իսկ հաստատված կզտենք հայեր Եփրատեն արևմուտք ոչ միայն Սեբաստիա, Լարիսա, Մելիդիին, Լիկանտոն և այլն, այլ նաև դեպի հարավ-արևմուտք՝ Միջագետք Հայոց (Սամոսատ, Եղիսիա, Ապամիա=Պիրեճիկ և այլն), Հյուսիսային Սուրիա (Անտիոք, Լավտիկե, Հալեպ, Մարաշ և այլն), Կիլիկիա (Տարսոն, Հոնի և այլն) և Իսալրիա (Սուլբնտա) և անոնք կճանչնային հայ կաթողիկոսներու հեղինակությունը, հայադավան մնալով հակառակ բյուզանդական պետության անբարյացակամությունը:

Հայերու այդ շրջաններու մեջ տեղավորվելը ավելի շեշտվեցավ ժԱ դարուն, երբ սելջուկները պատմության ասպարեզ եկան և վանեցին բյուզանդացիները Հայաստանի սահմաններեն ու տիրապետեցին երկրին:

Մեկ կողմեն Մայր-Հայրենիքին մեջ հայ ազգին դարերու ճիգով կերտած հիմնարկություններն ու մշակութիին օրորանները կքանդվին և երկիրը կամայանա, մյուս կողմեն հայերը զարմանալի տոկունությամբ և անվհատ ջանադրությամբ մը կաշխատին վերախմբվիլ ու կազմակերպվիլ այն հողերուն վրա, ուր ապաստանած են: Արդ, ժԱ դարուն, իսկապես հայ ցեղը զանգրվածորեն դեպի Արևմուտք կշարժվեր և կստիպվեր իր գրաված նոր տարածություններուն պատշաճեցնել և միջավայրին պահանջներուն գոհացում տալ:

Բյուզանդացիք Հայաստանի արևմտյան կողմը, Եփրատեն Ալիս տարածվող հողերուն վրա, ինչպես նաև Տավրոսյան լեռնաշղթային կողերուն վրա ապաստան ընծայեցին Հայաստանեն փախստական հայերուն և զանոնք ուզեցին պատվար գործածել բարբարոսներու արշավանքին դեմ:

Այս նպատակով իրենց հովանավորության տակ կազմեցին հայ ճորտ թագավորություններ՝ Սեբաստիա, Մամեդավ և Պիզու (Կեսարիա) կեդրոններով, ինչպես նաև անոնց վստահեցան Տավրոսյան անցքերու պաշտպանությունը, Քեսուն, Կոռոմոզը և այլն հաստատելով հայ իշխաններ, ինչպես նաև աչք դոցելով Փիլարտոսի իշխանության կազմակերպությունը և անոր ըմբոստ ու անկախ գործունեության և հայ ճորտ թագավորներուն պաշտպանի և հովանավորի ձևեր առնելուն:

Այս տաղնապալի օրերուն, երբ բյուզանդացիք պետք ունեին հայերու աջակցության, բնական է թե Հայ Եկեղեցիին դեմ հալածանքը կդադրեր, թեև անուղղակի կշարունակվեին հայերը օրթոտոքսության ենթարկելու ջանքերը:

Այս պայքարին մեջ հայերը հաջողեցան հաղթանակը տանիլ, վասնզի կրցան Բյուզանդիոնի խարդավանքներն ապարդյուն դարձնել:

Նախկին հայ թագավորները, ինչպես Փիլարտոս, իրենց իշխանության սահմաններուն մեջ Հայ Եկեղեցիին կազմակերպության և զորացման նպատակեցին, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը իրենց սահմանները (Թավբլուր, Մամեդավ կամ Մուտուրուտուն, և վերջապես Հոռմէլա) տեղափոխելով և Մարաշ, և հետո Հոնի մասնավոր կաթողիկոսություն մը ստեղծելով՝ հակառակ թերևս բյուզանդական ցանկություններուն:

Այսպես, վասպուրականի՝ Սենեքերիմ և Անիի ու Կարսի երկու Գագիկ թագավորներուն տեղափոխութենեն հետո դեպի Փոքր Հայք, Կապադովկիա և Արևելյան Փոքր Ասիա, Հյուսիսային Ասորիք, ինչպես նաև Տավրոսյան լեռներու լանջերը և Սև լեռներու շրջանակին մեջ մեծ թիվով հայեր հաստատվեցան և հայադավանությունը մեծ զարգացում ունեցավ այս շրջաններուն մեջ, և ամրապնդվեցավ ու ամուր կոռուս մը դարձավ գաղթական զանգվածներու համար (հմտ. Հայ Կեսարիա, էջ 536—538):

Հաջորդ երկու դարերուն (ԺԲ և ԺԳ) Եփրատի արևմուտքը (Արաբկիր Ակն, Չմշկածագ, Տիվրիկ, Շապին-Գարահիսար, Թուգատ, Սեբաստիա, Ամասիա և այլն) հայադավան կղանան գրեթե ամբողջությամբ, ինչպես Տավրոսի երկու լանջերը (Քեսուն, Մարաշ) և լեռնային ու դաշտային Կիլիկիաները, ուր եպիսկոպոսական աթոռներու թիվը ժԲ դարուն վերջերը 15-ի հասած էր արդեն:

Հայադավանության դեպի Արևմուտք կատարած այս նվաճումները կդառնան նշանակալի այն տեսակետով, որ ապահովաբար անոնք դեր մը կատարած են կիլիկյան այլացեղ և ալալեզու բնակչությունը, ինչպես երբեմն Հայաստանի ծայրագավառներու խառն բնակչությունը, հայության մեջ ձուլելու կամ նպաստած են հայացնելու՝ կրոնքի ուղիով:

Ասիկա վերջին փառքի շրջանը եղավ Հայ Եկեղեցիին, որ ժԳ դարեն հետո դժբախտաբար հետզհետե նվազիլ սկսավ, մասնավորապես հայ քաղաքական իշխանության տկարության պատճառով իր հովանավոր ուժեն զրկվելով:

Դեպի արևմուտք այս նվաճումը թերևս պատճառ եղավ, որ Հայ Եկեղեցին, ինչպես Վրանկանին ու Աղուականին, նույնպես նաև Ասորականին հետ շփում ունեցավ և որոշ

շափով մը հեղինակութիւն ձեռք բերավ և զայն ստորագրածք իրեն:

Ասորի եկեղեցին մինչև Ծ դար ինքն առաջնորդ և ղեկավար եղած էր Հայ Եկեղեցիին համար, ըսյց վերջը դերերը փոխվեցան և Հայ Եկեղեցին է, որ հովանավորած ու պաշտպանած է ասորի ուղղափառները, ու որոնք դավանակից էին հայոց ու կամբժեհին քաղաքատնի դավանութիւնը և նեստորականութիւնը և ասոր համար դարձյալ մեզի պես կհալածվին բյուզանդացիներին:

Ասորիները, թիվով ավելի նվազ և զուրկ սեփական պետութիւն մը ունենալու առավելութիւններին, տկար էին և հետևաբար իրենց հավատքը պահելու համար, ու երբ բյուզանդացիք զիրենք կենդին, կապատաններին Հայ Եկեղեցիին պաշտպանութիւն և համերաշխ կբաշխին հայոց հետ:

Ասորի եկեղեցին պառակտող հերձվածներու մեջ ալ հայերը միշտ հովանավորած են ասորի ուղղափառները:

Մասնավորապես երբ Զ դարուն Հուլյանց և Սեւրյանց բաժանումը եղավ, երկու հատվածն ալ հայոց հետ բարեկամ մնալ ուզեցին:

Առաջին անգամ Հայ Եկեղեցիին օժանդակութիւն ապաստանեցան Հայաստանի հարավակողմի՝ Ասորական Միջագետքի, Աղձրնյաց և Սասունի ասորիները, որոնք Հուլիանյան էին: Ներսես Բ Բագրևանդացի, իրենց խնդրանքով, անոնց հոգևոր պետ կձեռնադրն Արտիշոն, որ իբր հայ եպիսկոպոս Դուլին ժողովին կմասնակցի:

Այս պատճառով ասորի այդ հատվածը կոչված է նաև Գրիգորիկ կամ Գրիգորյան հայոց Լուսավորչին անունով:

Է դարուն Նիքիիտի և Սասունի ասորիները Հայ Եկեղեցիին կապված էին (Միքայել Ասորի) և Ը-Ժ դարերուն, տակալին, այս շրջանակին ասորի եպիսկոպոսները հայոց կաթողիկոսներին ձեռնադրութիւն կստանային (Ուլաանես): Ասոնք բուն կերպով դիմադրեցին Սեւրյան Հակոբ Մանծաղոսի և 616-ին ուրիշ նույն ազանդեն եպիսկոպոսներու և զանոնք վանեցին այդ սահմաններին:

Քրիստափոր Ա Տիրառիջցի «փիլիսոփա» կաթողիկոսը (539—549) նույնիսկ Պարսկաստան գացած է Խոսրով նուշերվանի կողմն 539—540-ին և 544-ին Անտիոքն ու Ծղեսիսյան ղեպի Պարսկաստան տարազրված ասորիները հոգևորապես մխիթարելու ու սրտապնդելու, ինչպես նաև եպիսկոպոսներ ձեռնադրելով անոնց հոգևոր կազմակերպութիւնը ապահովելու համար:

Նույնիսկ այդ ժամանակները հայեր կբարձրանան ասորի եպիսկոպոսական անթոնները: 726-ին Մանազկերտի ժողովը հայոց հետ ասորիներու դավանակցութիւնը վերստին կհաստատուի:

Այդ թվականն հետո միշտ անխտիր իրարու հետ զի հոգևորս» հարաբերած են երկու ազգերը:

ԺԱ դարուն ամեն տարբերութիւն բառնալու փորձեր եղած են, թեև առանց հաջողութիւն, բայց միշտ երկու եկեղեցիները իրարու նկատմամբ անխտրական ոգի ցույց տված են:

Գրիգոր Մագիստրոս, իր ժամանակին ամենն հեղինակավոր անձը, ասորոց Հովհաննես Ժ Բուր-Շուշան կաթողիկոսի գրած մեկ թուղթին մեջ կըսե թե «Աեբ ի ձէնջ ոչիւնջ հայցեմք յաղագս հաւատոյ, քանզի միաբանութեամբ պարսպեալ էք և ամենայն բարեձեռութեամբ փարսմացեալս և առ մեզ և մերում հայրապետաւոցի քո սրբազնութեանդ որպէս սրբոյն կիրւղի և երիցս երանեալ հարցն, որք յնգիպատսն են, այսպէս համարեմք արոտակից, պատարագակից, մաւաւաւոյ քէ քանաւայակից, ձեռնադրիմք և ձեռնադրեմք և գոր քոյ քոյոր քանաւայազորութեան հետեւին»:

Ներսես Շնորհալի (1166—1173) և Միքայել Ասորվոց պատրիարքը (1166—1199) միաբան հաստատած են երկու եկեղեցիներու համերաշխութիւնը և միասին միութենական բանակցութիւն ձեռնարկած են օրթոտոքս-եկեղեցիին հետ:

Հայ Եկեղեցին սակայն այլևս իսկապես նախապատիվ և հովանավոր եկեղեցիի դեր կկատարեր հանդեպ Ասորի եկեղեցիին, որուն ներքին գործերուն կմիջամտեն երբեմն հայ թագավորներ և կաթողիկոսներ:

Ասորիները, որոնք Ռուբինյանց թագավորութիւն սահմաններուն մեջ կարևոր թիվ մը ունեին և կկազմէին հավատարիմ ու բարեկամ տարր մը հայ թագավորութիւն, վասնզի ասորիները հոն կգտնէին բարյացակամ վերաբերում, մինչ անկե դուրս ասորիներն բնակված շրջանները, Միջագետք և Հյուսիսային Սուրիա մինչև Եփրատ, խաչակիրներն կազմված իշխանութիւններու ենթարկված էին, որոնց պետերը, իբր քաղաքատնականներ, իրենց կարգին կհալածէին ասորիները: Հայ կաթողիկոսները ասորի հալածական պատրիարքները այս շրջանին հյուրընկալեցին Հոսմիլյայի կաթողիկոսութիւն մեջ, և վերջապես Սիսի մեջ, ուր ասորիներն ունեին եկեղեցի մը:

ԺԳ դարուն կիսուն Սիս կառնա ասորի

կաթողիկոսներու ալ աթոր, պաշտպանութեան տակ հայոց թագավորներուն, մինչև որ Կիլիկիան թագավորութիւնը կկործանի: Ասկէ հետո է, որ ասորի կաթողիկոսները ժծ դարձնան կհաստատուին Մերտինի ասորի վանքի մը շուրջ: (Հայ և ասորի եկեղեցիներու հարաբերութեանց մասին տես Նրուանդ վրդ. Տէր-Մինասեանի— Հայոց եկեղեցւոյ յարաբերութիւնները ասորուց եկեղեցիներին հետ, 1903 թ. էջմիածին և Ա. Ալպոյանեանի Հայ և Ասորի յարաբերութիւններ հոգւածաշարքը «ժողովուրդի ձայն» լրագրին մեջ, թիվ 565—588, ինչպես նաև Չամչեանի Հայոց պատմութիւնը և Օրմանեանի Ազգապատմութիւնը):

Նման երևույթի մը կհանդիպինք նաև Արևելքի մեջ, վասնզի ինչ ինչ ցուցմունքներ կան, որ հայեր և ասորիներ քարոզած են քրիստոնեութիւնը Պարսկաստանի մեջ Դ դարին սկսւալ և հաջողած են կազմել հոն պարսիկ քրիստոնյա համայնք մը: Է դարուն: սկիզբը, հրը նեստորականներ մեծ տաքսապի մը ծնունդ տվին, պառակտում հառաջ բերելով Պարսից և Ասորվոց եկեղեցիներու միջև, Կոմիտաս կաթողիկոս (615—623) անոնց համար ղեկավարի դեր կատարեց և ուղիղ դավանութիւնը ցույց տվալ:

Դժբախտաբար հայ կաթողիկոսներու, իբր կրոնապետ, գրաված այս առաջնակարգ դիրքը երկար չտևեց, վասնզի արաբ տիրապետութիւնը և իսլամ կրոնքի տարածումը Պարսկաստանի մեջ շնչեց Պարսիկ եկեղեցին և գրեթէ անշքացուց Ասորի եկեղեցին:

Այնպես որ Հայ եկեղեցին եթև երբեք Հայաստանի արևելյան սահմաններին անդին Պարսկաստանի մեջ նվաճումներ կատարած էր, ինչ որ անհավանական չէ, և հաջողած պարսիկ քրիստոնյաներու գեթ սահմանափակ թիվով խումբեր ստեղծել, դժբախտաբար դեպքերն այնպես դասավորվեցան, որ անոնք անհետ կորսուեցան և Հայ եկեղեցին ջանքերը բոլորովին մոռցուեցալ:

Արաբական տիրապետութեան տակ Հայ եկեղեցին ալ մասնավեցալ դժվարութիւններու և իր ներգործող ուժը կորսնցուց, թեև անիկա մնաց մեծ ազդակ մը ազգութեան

պահպանութեան համար, ինչպես արաբական, նույնպես նաև անոր հաջորդող սելջուկ, թաթար և թուրք մտիրապետութիւններու տակ, բոլորն ալ սահմանական և ոչ բարեկամ քրիստոնեից:

Ասով հանդերձ բավական հաջողած է Հայ եկեղեցին Հայաստանի հայ բնակչութեան կրոնական միութիւնն անեղծ պահելու, ինչպես նաև Հայաստանի արևելքը՝ սահմանակից պարսկական սահմաններու, հյուսիսը՝ Պոնտոսի, Վրաստանի և Կովկասյան շրջաններու և հարավը՝ Ասորիքի և դեպի արևմուտքը՝ Փոքր Հայքի և Կապադովկիո մեջ ապրող հայերը և նույնիսկ ավելի արևմուտք՝ մինչև Եգիպտոս և Վոսիորի ու Տարտանելի նեղուցները սփռուած հայ գաղութները հայ ազգութենէն անբաժան պահելու, և այսպես կատարելու շատ նշանակալի դեր մը:

Այս հաջողութիւնը լիակատար չէ եղած, վասնզի հայ ազգին տկարութենէն օգտվելով օտար հավատորոսներ հայ ազգին կրոնական միութիւնը եղծանելու աշխատած և մասամբ հաջողած են:

Այսպես, մեկ կողմէն Բյուզանդիոնի գործադրած ճնշումին տակ մաս մը հայեր հունադավանութեան կհառնին, ուրիշներ լատին վարդապետներու քարոզութիւններէն և Հռոմի մեծ անունէն հրապուրված կաթողիկոսութեան կկապվեն և ուրիշ մաս մըն ալ իսլամ տիրապետողներու ճնշումին տակ կամ պարզապես դյուրակեցութեան կամ դինաթի մը չըլլալու համար կիսլամանային և հայ կրոնական միութիւնը կբանգլին, քանի որ հայութեան ծոցին մեջ կապրին հայ հոռոմներ կամ հայ կաթողիկէներ և հայ իսլամներ, առանց հաշվելու զանազան աղանդներու հարող և նոր ժամանակներու մեջ ամերիկացի միսիոնարներու ջանքերով Հայ եկեղեցիէն բաժնվելով բազմատեսակ ըողոքականութեան զանազան հատվածներու միացող հայերը:

Այնպես որ հայադավանութիւնը ոչ մեկ աշխարհագրական սահման գրավեց միապաղաղ կերպով ԺԴ դարին հետո:

Դանիտ

